

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ և ԳԵՐԱԿԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և 2017 թվականի գերակա խնդիրների համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով նախատեսված 22 գերակա խնդիրները և 12 միջոցառումներն իրականացվել են ամբողջությամբ:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2017 թվականի հունվար-նոյեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 811.7 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 3.9 %-ով: Համախառն արտադրանքի կրճատումը հիմնականում պայմանավորված է բուսաբուծության համար անբարենպաստ բնակլիմայական պայմաններով (երկարատև ցուրտ ձմեռ, կարճ գարուն, բազմամյա միջինից բարձր ջերմաստիճաններով շոգ ամառ և սակավաջրություն): Գյուղատնտեսության առանձնահատկություններով պայմանավորված տնտեսական վերջնական ցուցանիշները հնարավոր կլինի ներկայացնել տարվա արդյունքների ամփոփումից հետո:

Բուսաբուծություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2017 թվականի հունվար-նոյեմբերին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 459.3 մլրդ դրամ, որը զիջում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 7.9 %-ով: Ըստ օպերատիվ տվյալների 2017 թվականին գրանցվել է պտղի և հատապտղի ու խաղողի արտադրության ծավալների աճ, համապատասխանաբար՝ 39.5 և 12.4 %-ով: Որոշակի նվազել է հացահատիկային մշակաբույսերի, բանջարեղենի և կարտոֆիլի արտադրությունը: 2017 թվականին ճյուղում շարունակվել են, ինչպես նաև սկսվել են իրականացվել մի շարք նոր ծրագրեր, որոնք ուղղվել են հացահատիկային տնտեսության կայունացմանը, բարձրորակ սերմերով ապահովվածության մակարդակի բարձրացմանը, պտղաբուծության զարգացմանը, բույսերի պաշտպանությանը, շուկայականից ցածր գներով ռեսուրսների մատակարարմանը և այլն:

Անասնաբուծություն: 2017 թվականին արձանագրվել է անասնաբուծական մթերքների արտադրության որոշակի աճ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2017 թվականի հունվար-նոյեմբերին անասնաբուծության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 352.4 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 2.0 %-ով: Աճը հիմնականում ապահովվել է կաթի և մսի արտադրության ծավալների ավելացման հաշվին:

Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագիրը», «Տավարաբուծության զարգացման ծրագիրը»: Վերջինիս շրջանակներում եվրոպական երկրներից ներկրված տոհմային երինջների բազայի վրա ձևավորված տոհմային տնտեսություններում տոհմասելեկցիոն աշխատանքների շնորհիվ վաճառքի նպատակով իրականացվում է տոհմային երինջների աճեցում:

ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագիրը», որի իրականացման արդյունքում ստեղծվող տնտեսություններում կաճեցվեն մաքրացել կենդանիներ: Ձկնաբուծության ոլորտում 2017 թվականին ապրանքային ձկան արտադրության ծավալը կազմել է շուրջ 16.8 հազ. տոննա, ըստ օպերատիվ տվյալների, հանրապետությունից արտահանվել է շուրջ 3.0 հազար տոննա ապրանքային ձուկ:

Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում: Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով շարունակվել է աջակցությունը գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը և գործունեությանը: Մասնավորապես, Գյուղատնտեսության աջակցության մարզային կառույցների աջակցությամբ 2017 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզում ստեղծվել է 2 կոոպերատիվ («Վերնաշեն Միրգ» և «Աղավնաձոր Միրգ»): «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում 12 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 41 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 19 անիվավոր տրակտոր:

2. **Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում:** Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հաստատված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին» համապատասխան տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որի 6 տոկոսային կետը սուբսիդավորվել է: 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 106.6 մլրդ դրամի 127.7 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 5.4 մլրդ դրամ, որից 2017 թվականին ծրագրի առաջին փուլում տրամադրվել է 7.5 մլրդ դրամի 8340 միավոր վարկ, սուբսիդավորված գումարը կազմել է 704.7 մլն դրամ: ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել **Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը**, որն իրականացվում է նոր մեխանիզմներով և պայմաններով՝ սկսած 2017 թվականի 4-րդ եռամսյակից: Ավելացել է վարկավորման գումարը, ժամկետը և տոկոսադրույքի սուբսիդավորվող մասը: Օպերատիվ տվյալներով՝ 2017 թվականի 4-րդ եռամսյակում տրամադրվել է 920 միավոր վարկ 4276.0 մլն դրամ գումարի չափով: Մեկ վարկի միջին չափը կազմել է 4.65 մլն դրամ:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման պիլոտային ծրագրի շրջանակներում տրամադրվել է թվով 19 վարկ 1310.9 մլն դրամ գումարի չափով, կնքվել է բերքի գնման 919 պայմանագիր:

2017 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել մի շարք նոր ծրագրեր, որոնց իրականացումը նախատեսված է 2018 թվականից՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում հակակարկտային ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման պիլոտային ծրագրերը:

Գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացում:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման համար ծրագրի» շրջանակներում 2017 թվականին հողօգտագործողներին բաշխվել է շուրջ 28.5 հազ. տոննա ազոտական, 504.2 տոննա ֆոսֆորական, 903.1 տոննա կալիումական պարարտանյութ:

«Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրի» շրջանակներում հանրապետության հողօգտագործողներին 2017 թվականին տրամադրվել է 3.1 մլն լիտր վառելանյութ:

Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում: 2017 թվականին գյուղատնտեսական մթերք վերամշակող թվով 51 ընկերությունների կողմից մթերվել է 69.9 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն, իսկ խաղող վերամշակող թվով 53 ընկերությունների կողմից մթերվել է 110.9 հազ. տոննա խաղող:

2017 թվականին օպերատիվ տվյալներով հանրապետությունից արտահանվել է 120,8 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 58.1 հազ. տոննա պտուղ, որից՝ 28.5 հազ. տոննա ծիրան, 8.6 հազ. տոննա դեղձ, 1.2 հազ. տոննա կեռաս, 6.6 հազ. տոննա սալոր, 19.3 հազ. տոննա խաղող, 37.4 հազ. տոննա բանջարեղեն և 6.1 հազ. տոննա կարտոֆիլ:

3. Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն: «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի» շրջանակներում, որը մեկնարկել է 2017 թվականի ապրիլից օպերատիվ տվյալներով 157 միավոր գյուղատնտեսական տեխնիկա է տրամադրվել թվով 67 լիզինգառուի (շահառուի), այդ թվում՝ 67 միավոր տրակտոր, 2 միավոր կոմբայն և 88 միավոր այլ գյուղտեխնիկա:

խորհրդատվության ոլորտ: «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2017 թվականին տնտեսավարող սուբյեկտներին մատուցվել են հետևյալ ծառայությունները՝ 509 սեմինար և 425 դաշտային ուսուցում, 10965 խորհրդատվական միջոցառում, 82 փորձացուցադրական աշխատանք, 7 սեմինար-դասընթաց (վերապատրաստումներ) գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների խորհրդատուների և այլ շահառուների համար, 65 ռադիոհեռուստահաղորդում, 250 անուն խորհրդատվական թերթիկների և բուկլետների տպագրում՝ 59155 ընդհանուր տպաքանակով, 77 համար թերթի տպագրում՝ 102300 ընդհանուր տպաքանակով:

Նորաստեղծ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել է 37 ծրագրային խորհրդատվություն, 190 վարկերի հավաստագրման դասընթաց, նկարահանվել է 20 տեսանյութ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի գործունեությունն ուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններով աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը: